ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«ԺՊԻՏ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈՒԱԿ

Հասցեն՝ Շչերբինայի 8

Էլ. հասցե՝ jpit5@mail.ru

Ներկայացնում ենք Գյումրի համայնքի «Ժպիտ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Դպրոց) իրականացված ներքին գնահատման արդյունքում կազմված հաշվետվությունը:

Ներքին գնահատումն իրենից ներկայացնում է մանկապարտեզի ծառայությունների որակի մշտադիտարկման և հսկողության իրականացման և վերլուծության գործընթաց, և նպատակն է հանդիսանում բարելավել կրթա-դաստիարակչական ծառայությունների մատուցման որակը, ինչպես նաև նպաստել մանկապարտեզի գործունեության արդյունավետության բարձրացմանը, անվտանգությանը:

Ներքին գնահատումն իրականացված է հետևյալ ոլորտներում՝

- հաստատության անվտանգություն,
- հաստատության գործունեության արդյունավետություն,
- ուսումնական գործընթացի որակ:

Ուսումնական հաստատության ներքին գնահատման գործընթացում ցուցանիշների և չափանիշների հաշվարկման ժամանակ կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- վիճակագրական տվյալների վերլուծություն,
- փաստաթղթային վերլուծություն,
- շենքային պայմանների դիտարկում և փաստագրում,
- հարցումների իրականացում ծնողների շրջանում և վերջնարդյունքների վերլուծություն:

Ներքին գնահատումն իրականացված է տնօրենի հրամանով կազմավորված հանձնաժողովի կողմից, որի անդամներն են հանդիսանում՝ 08.09.2026թ-իվ *145* հրամանը

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սահակյան (ՆՈՒՀ-ի տնօրեն)

Անդամներ՝

1.<<Ժպիտ-մսուր մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի մեթոդիստ Տ. Պողոսյան

2.<<Ժպիտ-մսուր մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի դաստիարակ Լ. Հովհաննիսյան

3.Գյումրու համայնքապետարանի քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Կրաբաշյան

4.Գյումրու համայնքապետարանի քարտուղարության բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիսիթարյան

5.Ծնողական խորհրդի անդամ՝ Հերմինե Մակարյան

6. Ծնողական խորհրդի նախագահ՝ Ցողիկ Մարդոյան

Ներքին գնահատման և բաղկացած է 12 մասից՝

1. ուսումնական հաստատության շենքի և տարածքի անվտանգ շահագործումը
2. ուսումնական հաստատությունում սաների ու աշխատակազմի համար ուսումնականգործընթացի Եվ աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ նորմերի պահպանումը
3. սաների անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների և հմտությունների ձևավորման համար ուսուցողական ծրագրերի իրականացում
4. սաների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրերի և միջոցառումների իրականացում
5. տեղեկություններ ուսումնական հաստատության մանկավարժական անձնակազմի և ուսումնադաստիարակչական գործընթացի մասին
6. ուսումնական հաստատության զարգացնող միջավայրը
7. ուսումնական հաստատության մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսների արդյունավետ տնօրինում
8. ուսումնական հաստատության ծնողական խորհրդի համագործակցությունը մանկավարժական և վարչական անձնակազմի հետ
9. ուսումնական հաստատության և համայնքի համագործակցություն
10. ուսումնական հաստատությունում ներառականության և հավասարության ապահովում
11. ուսումնական հաստատության ռեսուրսները՝ ուղղված ԿԶԱՊԿ ունեցող սաների խնամքին և դաստիարակությանը. ուսումնական միջավայրի հարմարեցումը նրանց կարիքներին
12. ԿԶԱՊԿ ունեցող սաների կարիքների հաշվառումը ուսումնադաստիարակչական գործընթացում

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Ցուցանիշ	Այո	Մասամբ	Ոչ
ա. ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից.	✓		
բ. ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժման համար.	✓		
գ. արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին.	✓		
դ. ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավորապես հավաքվում է հատուկ աղբարկղերում և դուրս է բերվում հաստատության տարածքից.	✓		
ե. ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ.	✓		

ե. չափանիշի համար հիմք է հաստատության կողմից «Ախտահարման կանխարգելման» պայմանագիրը 01.01.2025-31.12.25թ:

2019թ. սեպտեմբերի 15-ին շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ տրվել է եզրակացություն՝ գնահատվել է առաջին աստիճանի, տեխնիկական վիճակը լավ՝ այն է կոնստրուկտիվ տարրերը պիտանի են շահագործման համար, պահանջում են որոշակի վերանորոգման աշխատանքներ:

Հաստատության տարածքը լրիվ ցանկապատված է մետաղյա կոնստրուկցիաներով, ունի մասնակի վերանորոգման կարիք՝ ներքնի հատվածներում: Հաստատության տարածք թափառող շների մուտքը արգելելու, բակը աղբից պաշտպանելու, ցանկապատի գեղագիտությունն ապահովելու համար:
Ահա նկարում ներկայացված փաստաթղթի տեքստը.

2.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Ցուցանիշ	Այո	Մասամբ	Ոչ
ա. ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է.	✓		
բ. ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահագործման անվտանգության նորմերին.		✓	
գ. շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր.		✓	
դ. ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով.	✓		
ե. շենքը հարմարեցված է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) ունեցող սաների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին (թեքահարթակներ, լայն դռներ և այլն).			✓
զ. ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով.			✓
է. համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին.	✓		
ը. անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին.	✓		
թ. բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները դեկորատիվ իրերը.	✓		
ժ. ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով,ապա դրանք ամրացված են հատակին. .	✓		
ժա. ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր.			✓
ժբ. ուսումնական հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ	✓		

կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է.			
ժգ. ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սաների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները.		✓	
ժդ. ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, խմբասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով.	✓		
ժե. ուսումնական հաստատության տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով.	✓		
ժզ. ուսումնական հաստատությունում սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին.	✓		
ժէ. խմբասենյակներում սեղան և աթոռների թիվը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված նորմերին.	✓		

Շենքն ունի արտաքին երեսպատման կարիք՝ այն է արտաքին պատերից պոկված, վնասված, ցեմենտ-ավազե սվաղի վերանորոգման, որմնախարսխի տեղաշարժված, վնասված քարերը վերաշարելու կարիք, բակի հետնամասի բարեկարգման խաղահրապարակի կառուցման կարիք:

Երկրաշարժից հետո շենքը վերանորոգվել է, կատարվել են ամրացման աշխատանքներ: 2016-2018 թթ ընկած ժամանակահատվածում շենքը կրկին վերանորոգվել է «Արտաքին հարաբերությունների աջակցման հիմնադրամի», «Բարի գալուստ Հայաստան» դիվանագիտական ասոցիացիայի, Չինաստանի դեսպանատան օժանդակությամբ:

Շենքը պաշտպանված է քամիներից՝ դուռ, պատուհանն ամուր են, հերմետիկ փակվող: Տանիքը մասնակի վերանորոգման կարիք ունի: Չկա խոնավություն, արտաքին պատերից ներս հավաքված է գիպսակարտոնային պատ: Շենքը պաշտպանված չէ հրդեհներից, ապահովված չէ անվտանգության լրակազմով, տանիքը պատված չէ հրակայուն նյութերով: Շենքում առկա են դեպի ներս բացվող 10 ելքեր:

ժբ-ից ժե չափանիշների համար սաների և աշխատողների տարհանումը վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք իրականացվելու է հետևյալ հաշվարկով՝

տարհանման հավաքակայան՝ Ակադեմիական վարժարան հասցեն Շերբինայի 2, ՏՀԿ թիվ 50/6

I Ընդունման հավաքակայան՝ Քարաբերդի դպրոց ԺՏԿ թիվ 30, Չիթհանքովի դպրոց ԺՏԿ թիվ 31

II Տարհանման երթուղին՝ Գյումրի- Ազատան- Մարալիկ-Քարաբերդ, Գյումրի- Մարալիկ-Չիթհանքով:


III Տարհանման միջոցը՝ ավտոշարասյուն

Հաստատությունում հաշվի առնված չեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները:

Տարհանման պլան-սխեման տեղադրված է մեծ նախասրահում:

Խմբասենյակների մակերեսների տվյալներ

Խմբասենյակ	Խմբասենյակի մակերեսը /քմ/	Մեկ սանին բաժին ընկնող մակերեսը /քմ/	Նորմերից պակաս կամ ավելի մակերեսը /քմ/
Առաջին «Բուրատինո»	111 քմ	33,7337 քմ	1
Երկրորդ Զատիկ	111 քմ	3,7	1,2
Երրորդ Մատնաչափիկ	111 քմ	3,7	1,2
Չորրորդ Աստղիկ	111 քմ	3,7	1,2
Հինգերորդ Թիթեռ	111 քմ	3,7	1,2
Վեցերորդ Արևիկ	111 քմ	3,7	1,2





3. ՍԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. Ուսումնական հաստատության անձնակազմն ու սաները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին:	✓	
բ. Անձնակազմն ու սաները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) տեղակայման վայրերի մասին, իսկ անձնակազմը տիրապետում է դրանց օգտագործման կանոններին:	✓	
գ. Հաստատությունում իրականացվում են տեղական նշանակության վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ	✓	
դ. ուսումնական հաստատությունում առկա է աղետներին պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանության պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան	✓	
ե. ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով.	✓	
զ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին խմբասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին.	✓	
ե. ուսումնական հաստատության միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-0 հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին.	✓	
ը. ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով	✓	
թ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ	✓	

ժ. Ուսումնական հաստատության բոլոր սանիանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն)	✓	
ժա. Հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանիանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանը		✓
ժբ. Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կազմակերպման կետ, որը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին	✓	
ժգ. Ուսումնական հաստատության սննդի կազմակերպման կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ	✓	
ժդ. Ուսումնական հաստատության առկա է բուժկետ և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն	✓	



Աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումների, աղետներին պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանության պլանի, վարժանքների վերաբերյալ աղյուսակ

Ամսաթիվը	Խումբը	Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը	Մասնակից սաների և աշխատակիցների թիվը
14.04.2025	միջին, ավագ	«Ինչպես դիմակայել աղետներին» պարապմունք միջին և ավագ խումբ	աշխատակիցներ՝ 16 սաներ՝ 55 ծնող՝ 43
11.07.2025	միջին, ավագ	«Ինչպես տարհանվել» ուսումնական վարժանք ՆԳՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ համատեղ Կիրառվել են՝ ուսուցողական նկարներ, բարձրախոս, տարհանման ելքերի գծանշաններ, մուլտֆիլմեր, առաջին օգնության բժշկական պայուսակ	աշխատակիցներ՝ 20 սաներ՝ 110 ծնողներ՝ 3
15.03.2026թ	միջին	Մարզական ժամանց «Ինչպես լինել առողջ»	սաներ-28 աշխատակիցներ-7 ծնողներ-10
14.03.2026թ	ավագ-ա	Մարզական վիկտորինա «Ինչպես վարել առողջ ապրելակերպ»	սաներ-24 աշխատակիցներ-6 ծնողներ-10
13.03.2026թ	ավագ-բ	Մարզական վիկտորինա «Ինչպես վարել առողջ ապրելակերպ»	սաներ-27 աշխատակիցներ-5 ծնողներ-12

աշխատակիցներ-12
Փ.Փ.Ծ- ծառայող-2



Ա. Վերջնարդյունքում աշխատակազմը, միջին և ավագ խմբի սաները տիրապետեցին երկրաշարժին, հրդեհին դիմակայելու վարքականոններին, կարողացան տարհանվել:

Բ. Միջին և ավագ խմբերում անցկացվում են պարապմունքներ աղետներին պատրաստվածության վերաբերյալ, դիտում են թեմատիկ մուլտֆիլմեր, պաստառներ:

Գ. Առկա է քաղպաշտպանության պլան, արտաքին ռիսկերի կառավարման պլան, որոնք ամեն տարի լրամշակվում են:

Դ. Անձնակազմը տեղեկացված չէ անվտանգության միջոցների վերաբերյալ, քանի որ բացակայում է հրշեջ ծորակը, էլեկտրական և հրշեջ վահանակները:

Խոհանոցում բացակայում է ազդանշանային սարքը:



Տարվա ցուրտ եղանակներին ջերմաստիճանը խմբասենյակներում՝ ննջասենյակներում-21

- **սանհանգույցներում-23**
- **դահլիճում-20**
- **նախասրահներում-19**

«ժդ» չափանիշի դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում.

Հաստատությունում առկա է բուժկետ- **այո**						
Հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն (ընդգծել այո կամ ոչ բառերը)						
Այո					*Ոչ*	
Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը (քմ)	Բուժաշխա տողներ (թիվը և նրանց պաշտոնները)	Բուժկետում առկա գույքը	Բուժկետը վերանորոգված է, թե ոչ		Բուժկետի սանիտարա-կան վիճակը	Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը
15,6 Առաջին հարկ	բուժքույր	Հասակաչափ կշեռքներ, գրասեղաններ, թախտ, աթոռ, պահարան	Այո-✓	Ոչ	Բարվոք	հակահիստամինային դեղամիջոցներ, կորտիկոստերոիդներ, ջերմիջեցնողներ, կատվախոտի թուրմ, ջրածնի պերոքսիդ, սպեղանի, սպիրտ, յոդ, բամբակ, ռետինե սեղմիչ, ներարկիչներ, խոնավածուծ սպեղանի և այլն	

4. ՍԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ցուցանիշ	Այո	Մասամբ	Ոչ
ա. ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից իրականացվում են սաների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, կանխարգելման և հանրային քննարկման աշխատանքներ	✓		
բ. ուսումնական հաստատությունն անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում է սանի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ծնողավարման հմտությունների զարգացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ.	✓		





Այս չափանիշների դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում.

Ամսաթիվը	Խումբը	Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը	Մասնակիցների թիվը
02.09.2025թ	հինգ տարիքային խմբերի ծնողների մասնակցությամբ	առաջին ընդհանուր ծնողական ժողով օրակարգում՝ 1.Նախադպրոցական դաստիարակության դժվարությունները 2.Մանկապարտեզի գործունեության վերաբերյալ անանուն գծապատկերի լրացում 3. Ծնողական կոմիտեի ընտրություն. խորհրդատվություններ ընտանիքներին.	91 ծնող 4 մանկավարժական աշխատող 2 աշխատող սպասարկող անձնակազմից
11.04.2026	կրտսեր 2	«Ընտանեկան բռնության կանխարգելումը» թեմայով սեմինար քննարկում	20 ծնող 16 մանկավարժական աշխատող
14.04.2026	միջին խումբ	«Ընտանեկան բռնության կանխարգելումը» թեմայով սեմինար քննարկում	15 ծնող 13 մանկավարժական աշխատող 4 սպասարկող անձնակազմ
12.06.2026թ	հինգ տարիքային խմբերի ծնողների մասնակցությամբ	երկրորդ ընդհանուր ծնողական ժողով օրակարգում՝ . ծնողական կոմիտեի հաշվետվություն . կրթական փորձարարական ծրագրերի արդյունավետություն.	9 մանկավարժական աշխատող 102 ծնող

		.ծնողավարություն .երեխա-ծնող-մանկավարժ կապի կատարելագործում .«Տղան ու խնձորենին», «Հարուստն ու աղքատը», «Հոգով հարուստը» բարոյական-խրատական առակներիազդեցությունը մայրության բարդ գործընթացին:	
16.06.2026	ավագ-Ա-ավագ-Բ կրտսեր երկրորդ միջին	«Ընտանեկան կյանքի վառ գույները» վեբինար քննարկում	12 մանկավարժական աշխատողներ 50 ծնող

5. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

Ցուցանիշը	2024-2025	2025-2026	2026-2027	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը	12	14	14	աճ
Մանկավարժական աշխատողների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը՝ դաստիարակներ	40	40	40	
երաժշտական ղեկավարներ	30	30	30	անփոփոխ

Տվյալներ հաստատության վարչական կազմի վերաբերյալ

Պաշտոն	Անունը, ազգանունը, հայր անունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը	Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
տնօրեն	Արևհատ Սահակյան	քսանինը տարի տնօրեն	քսանինը	

Տվյալներ մանկավարժական խորհրդի կազմի վերաբերյալ

Անուն, ազգանուն, հայրանուն	Զբաղեցրած պաշտոնը	Կրթությունը	Հաստատ. մանկխորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը	Պետական պարգևները կոչումները և այլն
Ա. Սահակյան	տնօրեն	բարձրագույն	29	
Ա. Մուրադյան	ուս. գծով տեղակալ	բարձրագույն	11	
Տ. Պողոսյան	ուս. գծով տեղակալ	բարձրագույն	1	
Հ. Սողոյան		բարձրագույն	17	
Ա. Հարությունյան		միջ. մասն.	24	
Լ. Հովհաննիսյան		բարձրագույն	17	
Ա. Գրիգորյան		բարձրագույն	10	
Լ. Սաղաթելյան		բարձրագույն	17	
Կ. Հովհաննիսյան		միջին մասն.	10	
Թ. Հարությունյան		միջին մասն.	6	
Գ. Կոստանյան		բարձրագույն	6	
Ա. Սարգսյան		միջ. մասն.	1	

Վերապատրաստում անցել են՝

Ցուցանիշ	
ա. մանկավարժական աշխատողներից քանիսնունեն գիտական կոչում.	-
բ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերջին 5 տարում վերապատրաստում անցել նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում.	9
գ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերապատրաստվել որպես վերապատրաստող (դասախոս) և վարում են վերապատրաստման դասընթացներ.	-
դ. որքան է մանկավարժական աշխատողների միջին տարիքը.	44

ե. մանկավարժական աշխատողներից քանիսն ունեն միջազգային ու տեղական պարբերականներում(ամսագրերում) հրապարակված հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ.	-
զ. մանկավարժական աշխատողներից քանիսն են ուսումնական գործընթացում կիրառում ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ /ՏՀՏ/	12
է. որքան է մանկավարժական աշխատողների բացակայությունների ընդհանուր թիվը	բացակայությունները հիմնավորված են՝ ամենամյա երկարացված արձակուրդ, չվճարվող արձակուրդ,ծննդաբերության և հղիության արձակուրդ, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի նպատակային արձակուրդներ անաշխատունակության թերթիկի հիմնավորմամբ բացակայություն

Տվյալներ հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ

Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. սահմանված ժամկետում ձևավորվել է սաների համակազմը՝ ըստ տարիքային խմբերի	✓	
բ. ուսումնական հաստատությունում իրականացվում են մանկավարժական խորհրդի նիստեր և առկա է մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյան.	✓	
գ. ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին և տվյալ տարիքային խմբի ծրագրին (այդ թվում՝ կրթության պետական լիազոր մարմնի կողմից հաստատված հեղինակային և այլընտրանքային) համապատասխան.	✓	
դ. ուսումնական հաստատությունում ձևավորվել է ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով խումբ և ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է վերջիններիս մայրենի լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ.		✓
ե. մանկավարժական աշխատողները տիրապետում ուսուցման ժամանակակից (երեխայակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ և այլ) մեթոդներին և գործնականում կիրառում դրանք.	✓	
զ. մեթոդիստը ցույց է տվել խորհրդատվական օգնություն մեթոդական, ուսումնական և դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու համար, անցկացրել է բաց պարապմունքներ, սեմինարներ, սեմինար-պրակտիկումներ.	✓	
է. մեթոդիստը վերահսկել է նախադպրոցական կրթական ծրագրի կատարումը.	✓	
ը. ուսումնական տարվա ընթացքում հաստատությունում անցկացվել են ցուցադրական բաց պարապմունքներ, իրականացվել նախագծեր. *(եթե այո, նշել՝ ծրագրային որ բաղադրիչների ուղղությամբ են անցկացվել և քանակը)*	14 բաց պարապմունք, ԽՋ, ԻՇԱ, ԿԿԱ, ՄՏՊ, ֆիզկուլտուրա, երաժշտություն	

թ. ուսումնական տարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվել են պարապմունքներ. *(եթե այո, նշել՝ ծրագրային որ բաղադրիչների ուղղությամբ են անցկացվել և քանակը)*	ԽՋ, ԻՇԱ, Ե 1	
ժ. ուսումնական տարվա ընթացքում անցկացվել են պարապմունքներ համայնքային ենթակայության այլ կրթական հաստատություններում՝ գրադարան, երաժշտական դպրոց. *(եթե այո, նշել՝ ծրագրային որ բաղադրիչների ուղղությամբ են անցկացվել և քանակը)*	Հ. Թումանյանի անվ. մանկական գրադարանում «Հեքիաթին հյուր» ԽՋ, ԻՇԱ, Ե	

Վերլուծել նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների և նրանց գործունեությանը վերաբերող ցուցանիշները, դրանց փոփոխությունների դինամիկան և առկա հիմնախնդիրները: Կատարել եզրահանգումներ ու առաջարկել լուծումներ նրանց գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Մանկապարտեզը ԿՋՆԱԿ-ի կողմից երկու հազար քսաներեք թվականի սեպտեմբերից իրականացվում է փորձարարական ծրագիր, որի շրջանակում մանկավարժները ծրագրին ներկայացրել են առաջարկություններ, դիտարկումներ:
2026թ.մարտի 3-ից իրականացվել է պետական հովանավորությամբ փորձարարական ծրագիր, որը հասցեագրվել է 1-2 տարեկանների վաղ տարիքի 2-րդ խմբի գործելուն:
Վարչական և մանկավարժական աշխատողները գրել են հետազոտական աշխատանքներ:
ԿՋՆԱԿ հիմնադրամի կողմից դիտարկված աշխատանքները չեն մերժվել:
2026թ.մարտի 3-ից իրականացվել է պետական հովանավորչությամբ փորձարարական ծրագիր, որը հասցեագրվել է 1-2 տարեկանների՝ վաղ տարիքի 2-րդ խմբի գործելուն:
Տրամադրվել է 5 հոգանոց աշխատակազմին երեքօրյայ երապատրաստման վկայականներ:
Իրականում գնալով բարելավվում է դաստիարակների կողմից մատուցվող նախադպրոցական կրթությունը: Կիրառվում են նյութի մատուցման նորարարական մոտեցումներ, մեթոդներ, զարգացնող հնարներ, խաղային տեխնոլոգիաներ, մեդիամիջոցներ: Իրականացվում է երեխայակենտրոն ուսուցում, կատարելագործվում է զարգացնող միջավայրը:

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. ուսումնական հաստատությունն ունի գործող մեթոդկաբինետ, որը հագեցած է ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով:	✓	
բ. ուսումնական հաստատությունն ունի - մարզադահլիճ, - միջոցառումների անցկացման դահլիճ - այլ հատուկ ուսումնական խմբասենյակներ (սենյակներ), այդ թվում՝ լրացուցիչ կրթական ծրագրերի համար (նկարչական խմբակ և այլն), որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, և ուսումնադիդակտիկ նյութերով.	Երաժշտության դահլիճը հագեցված է գույքով, դաշնամուրով, ուսումնական պարագաներով, խաղադեկորներով, ուսումնադիտողական նյութերով	մարզադահլիճ

Կից՝ նկարներ և գույքի հագեցվածության ցուցակներ:

Գույք

1. Հեռուստացույց
2. Համակարգիչ, տպիչ, դյուրակիր համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ
3. Պարային զգեստներ
4. Դաշնամուր՝ 2 հատ
5. Մարմնամարզական նստարան
6. Գնդակներ տարբեր չափի, գնդակի նետման զամբյուղներ
7. Բուլավաներ
8. Բասկետբոլի ցանց
9. Հեծանիվներ երկանիվ, եռանիվ
10. Ինքնագնացներ
11. Ցատկապարաններ
12. Օղակներ
13. Ներքնակներ
14. Մանկական տարբեր նվագարաններ փայտից՝
15. Երաժշտական սկավառակներ
16. Տիկնիկային թատրոնի ձեռնոց-տիկնիկներ
17. Տիկնիկային թատրոնի դեկորացիաներ, շիրմաներ
18. Տարբեր չափի տիկնիկներ
19. Դիմակներ

20. Դիդակտիկ պարագաներ
21. Թեմատիկ նկարներ
22. Ցուցապաստառներ տարբեր թեմաներով
23. Մեթոդական գրականություն, ուսումնամեթոդական ձեռնարկներ, մանկական գեղարվեստական գրքեր



24. Տեսաժապավեններ
25. Հաշվիչներ
26. Լեգոներ
27. Մոզաիկաներ
28. Թանգրամ՝ փազլներ
29. Գլուխկոտրուկներ
30. Խորանարդներ
31. Մաթեմատիկական պարագաներ
32. Մագնիսական գրատախտակ
33. Լուսային գրատախտակ
34. Գրենական պիտույքներ
35. Դրոշներ
36. Կառուցողական խաղեր
37. Շախմատ
38. Դոմինո
39. Սեղանի խաղեր
40. Տարբեր բժշկական գործիքներ
41. Հողագործական խաղալիքներ, մեքենաներ
42. Մանեժներ
43. Պահարաններ
44. Սեղան, աթոռներ
45. Ծաղիկների շարահարկեր ծաղկեփնջերդեկորատիվ
46. Մահճակալներ
47. Ռետինից գորգեր
48. Մանեժներ



7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏՆՕՐԻՆՈՒՄ

Ցուցանիշ		2024-2025 ուստարի	2025-2026 ուստարի	2026-2027 ուստարի
ա. սան - մանկավարժ հարաբերությունը.	Սան / Մանկավարժ	147 / 9	151 / 11	160 / 12
բ. սան - սպասարկող անձնակազմ հարաբերությունը.	Սան / Սպաս. անձն.	147 / 10	151 / 10	160 / 13
գ. սան - վարչական անձնակազմ հարաբերությունը.	Սան / Վարչ.. անձն.	147 / 1	151 / 1	160 / 1
դ. խմբերի միջին խտությունը.		30	31	32
ե. մեկ սանի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը.		355000	380000	368700
զ. մանկավարժի միջին աշխատավարձը.		97000	140000	178563
է. վարչական աշխատողների միջին աշխատավարձը.		-	-	151054
ը. սպասարկող կազմի միջին աշխատավարձը.		988,7	988,7	151054
թ. հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը.		13000,0	13420,0	12480,0
ժ. ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը.		3745,6	10640,8	7197,5
ժա. սոցիալապես անապահով ընտանիքներից սաների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը		-	-	-

և դրանց թիվը. *(եթե այո,ապա նշել այդ ծրագրերը)*			
ժբ. դրամաշնորհային և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ներդրումների տարեկան չափը.	-	-	-
ժգ. աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը.	23536,3	23722,2	3877940
ժդ. կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը.	2087.6	2203.3	2 266 878
ժե. նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը.	-	-	-

Խմբերի թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Խմբերի թիվը	2024-2025	2025-2026	2026-2027	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Վաղ տարիքի 2-րդ	-	-	1	
Կրտսեր 1-ին	1	1	1	
Կրտսեր 2-րդ	2	1	1	
Միջին	1	2	1	
Ավագ	1	1	2	
Ավագ	-	-	-	
Տարատարիք	-	-	-	
Ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով ձևավորված խումբ	-	-	-	
Ընդամենը՝	5	5	6	

Այս և հաջորդող բոլոր աղյուսակներում անհրաժեշտ է նկարագրել փոփոխությունների դինամիկան՝ մեկնաբանել աճի կամ նվազման պատճառները.
Փոփոխությունների դինամիկան ըստ աճի պատճառաբանվում է վաղ տարիքի 2-րդ խմբի գործելով:

Ըստ խմբերի սաների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Սաների թիվը	2024-2025	2025-2026	2026-2027	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Վաղ տարիքի I	-	-	-	%
Վաղ տարիքի II	-	-	15-	%
Կրտսեր I	45-	22	22-	%
Կրտսեր II	33	33	32	%
Միջին	35	62	33	%

Ավագ	34	33	58	%
Տարատարիք				%
Ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով ձևավորված խումբ	-	-	-	
Ընդամենը՝	147	150	160	

Ընդհանուր տվյալներ սաների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշ	**2024-2025**	**2025-2026**	**2026-2027**	**Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)**
Սաների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝	147	151	160	%
Սաների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա օգոստոսի 20-ի դրությամբ	121	129	112	%
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սաների թիվը	60	37	40	%
Ուսումնական տարվա ընթացքում սաների բացակայությունների միջին թիվը	2087	1900	1700	%
Ուսումնական տարվա ընթացքում ազատված սաների թիվը	51	42	70	%

Վերլուծել սաների թվաքանակի փոփոխության պատճառները, կատարել եզրահանգումներ և առաջարկել հիմնախնդիրների լուծման ուղիներ:

-վիրուսային հիվանդությունների պատճառով երեխաների սահմանված համակազմը թվաքանակով պակասել է
Չաշխատող ծնողների երեխաները ազատվել են:
Ազատվել են ավագ խմբի սաները, դպրոց գնալու պատճառով:
Սաները ազատվել են երկրից մեկնելու պատճառով:
Դժգոհության պատճառով ___ազատված սաներ չեն եղել_____
_____

8. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ


Ցուցանիշ		2024-2025	2025-2026	2026-2027
ա. սաների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից գրավոր ներկայացված առաջարկությունները, դրանց թիվը և ընդունված առաջարկությունների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.	Թիվը / Տոկոսը	75/4	68/5	77/8
բ. ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները (հանդեսներ, հավաքներ, երեկույթներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն), դրանց թիվը, մասնակից ծնողների թիվը և սաների տոկոսը.	Թիվը / Տոկոսը	3/70/80	4/82/86	5/81/76
գ.ծնողական խորհրդի կազմում ԿԶԱՊԿ ունեցող սաների ծնողների թիվը և տոկոսը	Թիվը / Տոկոսը	3/1-	2/1-	2/1-
դ. ծնողական խորհրդի կողմից հաստատության գործունեության վերաբերյալ ներկայացված կարծիքը քննարկվում է աշխատակիցներին խրախուսելու կամ նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու ժամանակ.	Այո / Ոչ			
ե. ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը և դրանց ընթացքում քննարկված հարցերի շրջանակները.	Եռամսյակը մեկ անցկացվում են խմբային ժողովներ տարիքային բոլոր խմբերում, որին մասնակցում են ծնողական խորհրդի անդամներ, մանկավարժական աշխատողներ, բուժքույրը քննարկվում են մանկավարժահոգեբանական բնույթի թեմաներ, կենցաղին, ծնողավարությանը առնչվող հարցեր ուսումնական տարվա սկզբին՝սեպտեմբերին և մայիս ամսին անցկացվում են ընդհանուր ծնողական ժողովներ, որին մասնակցում են բոլոր խմբերի ծնողները քննարկվում են թեմաներ կապված օրվա ռեժիմի,			

	երեխաների հաճախումների, հիվանդությունների, սննդի կազմակերպման, ֆինանսական, վարչատնտեսական հարցերի շրջանակներում: *
զ. ուսումնական հաստատության առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը.	**
է. այն ծնողների տոկոսը, որոնք օգտվում են նախարարության, համայնքի, հաստատության և կրթական այլ կայքերից:	*** 150

Կից՝

* լուսանկարներ և ծնողական խորհրդի հանդիպումների քանակը և արձանագրությունների լուսապատճենները,
թղթային կամ առցանց հարցման արդյունքները՝ աղյուսակներով,
*** թղթային կամ առցանց հարցման արդյունքները՝ աղյուսակներով:





9. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ցուցանիշ	
ա. ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցությունը, այդ գործում կատարված ներդրումները. *(Նկարագրել համայնքի մասնակցության դեպքերը, մասնակցության ձևը, ներդրման չափը, ամսաթիվը).*	*01.07.2026թ համայնքի կոմունալ բաժնի աշխատակիցները խոտհնձիչ սարքերի օգնությամբ մաքրել են բակի տարածքը ավելորդ խոտածածկից:*
բ. համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ հաստատության աշխատակազմի տեղեկացվածությունը և նրանց մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած աշխատակիցների տոկոսը. *(Նկարագրել հասրատության աշխատակազմի մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած աշխատակիցների տոկոսը (վերջին 3 տարում).*	Հաստատության աշխատակազմը տեղեկացված է համայնքի մշակութային անցուդարձին,ցուցաբերում է կամավոր մասնակցություն:Տոներին և հիշարժան օրերին տրամադրվում են հրավիրատոմսեր:
գ. ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված ու անցկացված միջոցառումները և դրանց թիվը, մասնակից սաների և ծնողների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը. *(Նկարագրել հասրատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները, մասնակից սաների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը. (վերջին 3 տարում).*	Գյումրու համայնքապետարանի կողմից սաները ստացել են ամանորյա նվեր պարկեր, դպրոցահասակ սաները՝ դպրոցական պայուսակներ :
դ. ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված կրթական	2016 թվականից Կարիտաս բարեսիրական հասարակական կազմակերպությունը «Իմ իրավունքը»

ծրագրերը, դրանց թիվը և մասնակիցների թիվը՝ ըստ ծրագրերի. *(Նկարագրել կրթական ծրագրերը, որոնք իրականացնում են հաստատությունը և ՀԿ-ները համատեղ, ծրագրի տևողությունը, թիվը, մասնակից սաների և աշխատակիցների թիվ).*	ծրագրի շրջանակներում իրականացրել է է կրթական ծրագիր: Արդյունքում ստեղծվել է ԿՀՔԿ-15-րդ հիմնական դպրոց-«Ժպիտ- մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ եռակողմ կապ, որի արդյունքում իրականացվում է մանկապարտեզից դպրոց սահուն անցման ծրագիր սովորական և ԿԶԱՊԿՈՒ սաների համար: Ծրագրի տևողությունը վեց տարի է: Ստեղծվել է համագործակցային «Ինդեքս» թիմ: Ծրագրի շրջանակում կազմակերպվել են արտագնա թեմատիկ սեմինար-քննարկումներ
ե.ուսումնական հաստատությունը համագործակցում է իրեն սպասարկող Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ.	Մանկապարտեզը համագործակցում է Գյումրու ՏՄԱԿ-ի հետ:Իրականացվում է 2 ԿԶԱՊԿ սաների գնահատման գործընթաց: Երկու ամիսը մեկ անգամ ներկայացվում են հաշվետվություններ,մանկավարժական անձնակազմի,ծնողական համա
զ. ուսումնական հաստատությունը համագործակցում է համայնքում գործող բժշկականական հաստատության հետ՝ ԿԶԱՊԿ ունեցող երեխաների հայտնաբերելու և ն/դ կրթության մեջ ներգրավելու նպատակով.	ԿԶԱՊԿունեցող երեխաներին բժշկական հաստատություններից հայտնաբերելու և կրթական գործընթացում ներգրավելու առաքելությունը ստանձնել է Կարիտաս բարեսիրական հասարակական կազմակերպությունը: Մեկ սան ընդգրկվել է:
է. ուսումնական հաստատությունը համագործակցում է համայնքի հանրակրթական դպրոցների հետ՝ իր սաների սահուն անցումը կրթական հաջորդ մակարդակ ապահովելու նպատակով.	Համագործակցում է մանկապարտեզը համայնքի հանրակրթական դպրոցներից թիվ 15 հիմնական դպրոցի հետ 2023 թվականից: Համագործակցությունից շահում է մանկապարտեզից դպրոց սաների սահուն անցման ծրագիրը:

10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ցուցանիշ	Կատարել նշում համապատասխան փաստաթղթի, միջոցառման և գույքի առկայության մասին.
ա. ուսումնական հաստատությունում բոլոր սաների համար հասանելի և հավասարապես որակյալ կրթության կազմակերպման նպատակով հաստատության տարեկան պլանում սահմանված են գործողություններ. *(Եթե այո, ապա կատարել հղում).*	ՆՈՒՀ-ի տարեկան աշխատանքային պլան ներում մեթոդիստի տարեկան, եռամսյակային, ամսական պլաններում դաստիարակի տարեկան, շաբաթական օրացուցային պլաններում նախատեսվել են միջոցառումներ, որոնք նպաստել են որակյալ կրթությանը: Վերջիններիս շարքերում են՝ պարապմունքների բաշխման գրաֆիկ, բաց պարապմունքների օրինակելի պլան-կոնսպեկտներ առողջության օրեր, սպորտլանդիաներ, զբոսանքներ, էքսկուրսիաներ, տոնական ցերեկույթների սցենարներ, հիշարժան օրերի նշում, ծննդյան օրերի նշում, մեթոդական սենյակի հագեցվածություն, դիդակտիկ պարագաների առկայություն, ինքնաշեն խաղալիքների, դեկորների պատրաստում:
բ. ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային պլանում ներկայացված են ԿԶԱՊԿ ունեցող սաների կրթության կազմակերպման որակի բարձրացմանը նպաստող միջոցառումներ, այդ թվում՝ մանկավարժների, դաստիարակների օգնականների վերապատրաստումներ. *(Եթե այո, ապա թվարկել համապատասխան միջոցառումները).*	Սկսած 2023թ-ից համատեղ զարգացման պլան է մշակվել հիմնված «Ներառման ինդեքս». միջազգային ուղեցույցի վրա «Իմ իրավունքը». ներառական կրթություն Հայաստանում ծրագրի շրջանակներում պահովվել է սաների սահուն անցումը մանկապարտեզից-դպրոց: «Կազա Գյումրի կենտրոնում անցկացվել է սեմինար-քննարկում, թեման «ՆՈՒՀ-ից դեպի դպրոց երեխայի սահուն անցում» 2026թ. կազմակերպվել է երկօրյա դասընթաց «Կիրառական վարքային վերլուծությունը ներառական կրթության մեջ աուտիզմ ունեցող երեխաների համար «Հայկական Կարիտաս»ԲՀԿ-ի նախաձեռնությամբ «Ներառական կրթությունը Հայաստանում և Կոսովոյում»

	ծրագրի շրջանակում: Մասնակից մանկավարժական երեք աշխատողներ ստացել են վկայագրեր ԹԵՄԱՆԵՐ- «Անցանկալի վարքագծի դրսևորումների վերլուծություն» «Վարքագծի կառավարման ժամանակակից մոտեցումներ», «Անցանկալի վարքագծի հաղթահարման տեխնիկաներ, կանոնների սահմանում» «ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ,ԱՆՑԱՆԿԱԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԲԱԶՄԱՔԱՅԼ ՏԵԽՆԻԿԱ» , «Կարիտաս» ԲՀԿ-ի, «Իմ իրավունքը» Ներառական կրթություն Հայաստանում և Կոսովոյում ծրագրի շրջանակներում կազմակերպվել է «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները նախադպրոցական մակարդակում» թեմայով: Մասնակից 2 մանկավարժական աշխատողները ստացել են վկայականներ: 20.06.2026 Շիրակի ՏՄԱԿ սեմինար քննարկում «ՆՈՒՀ-ի դերն ու գործունեությունը ԿԶԱՊԿ գնահատման գործընթացում», «ԿԶԱՊԿ գնահատման կարգը», «Ծանոթացում փաստաթղթային լրացման կարգին», «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները նախադպրոցական մակարդակում» թեմաներով:
գ. վերջին հինգ տարում մանկավարժական աշխատողները մասնակցել են վերապատրաստումների, այդ թվում՝ «Համընդհանուր ներառական կրթություն» թեմայով. *(Եթե այո,ապա նշել վերապատրաստող կազմակերպությունը, վերապատրաստման ամսաթիվը և տևողությունը ժամերով, ինչպես նաև մեկնաբանել դրա արդյունավետությունը).*	Ծրգրի ղեկավար՝ Գայանե Նորիկյան ծրագրի համակարգող՝ Զինա Հովհաննիսյան, Զառա Գրիգորյան ծրագրի աննիմատոր՝ Սուրեն Ավդալյան սոցիալական աշխատող՝ Էմմա Մկրտչյան «Պլազա Վիկտորիա» հյուրանոցային համալիր ծրագրի ղեկավար՝ Գայանե Նորիկյան դասընթացավար՝ Սերոբ Խաչատրյան Կազա Գյումրի կենտրոն Ծրագրի ղեկավար՝ Գայանե Նորիկյան

	Դասընթացավար՝ «Պլազա Վիկտորիա» հյուրանոցային համալիր Ծրագրի ղեկավար՝ Գայանե Նորիկյան Դասընթացավար՝ «Դիլիջան» ծրագրի ղեկավար-Գայանե Նորիկյան դասընթացավար՝ ՀՀ ԿԳՄՍՆ ՀՄԿ տնօրեն՝ Արանքսիա Սվաջյան «Իգիթ» համալիր դասընթացավար 'Արաքսիա Սվաջյան Երևանի թիվ 20 դպրոցի տնօրեն' Անահիտ Խոսրովյան Թեժ լեռ հանգստյան տուն Ծրագրի ղեկավար՝ Գայանե Նորիկյան Դասընթացավար՝ Արմինե Ավագյան Շիրակի ՏՄԱԿ Դասընթացավարներ՝ Վարդուհի Սաղաթելյան, Սեդա Կարապետյան
դ. վերջին հինգ տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած դաստիարակների օգնականների թիվը. *(Եթե այո, ապա նշել վերապատրաստված դաստիարակի օգնականների թիվը).*	2026թ. մեկ դաստիարակի օգնական վերապատրաստվել է:

11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ՆՐԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

Ցուցանիշ	Կատարել նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին
ա. ուսումնական հաստատությունում ամենուրեք (խմբասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն. *(Եթե այո, ապա նկարագրել ինչպիսի պայմաններ են ստեղծված տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ֆիզիկական մատչելիության ապահովման համար).*	Հավասար են հատակները ննջարանից խաղասենյակ, մնացած տարածքներում կան շեմեր Բակի կողմից մուտքերին կառուցված են թեքահարթակներ:
բ. ուսումնական հաստատությունն ունի ԿԶԱՊԿ ունեցող սաների մանկավարժահոգեբանական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցմանկավարժ, հոգեբան և այլն). *(Եթե այո, ապա թվարկել հոգեբանամանկավարժական աջակցության հաստիքները, նշել ինչպես է կազմակերպվում նրանց աշխատանքը: Նկարագրել նաև ներառականության ուղղությամբ համապատասխան աշխատողների պարտականությունների շրջանակը, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների հետ վարվող աշխատանքները, լրացուցիչ հաստիքների կարիքը և այլն: Հաշվարկել մանկավարժա-հոգեբանական աջակցության թիմի աշխատակիցների թվի հարաբերակցությունը ԿԶԱՊԿ ունեցող սաների թվին):**	Հոգեբան շաբաթական վեց պարապմունք՝ 30 րոպե տևողությամբ Լոգոպեդ՝ նույնությամբ Հատուկ մանկավարժ՝ նույնությամբ
գ. ԿԶԱՊԿ ունեցող սաներն ապահովված են ֆիզիկական և ճանաչողական զարգացման համար անհրաժեշտ խաղային նյութերով, պիտույքներով, հարմարանքներով, այլ պարագաներով.	Առկա են իրար վրա հագնող գունավոր աշտարակներ «Բիզիբորդ»

(Եթե այո, ապա թվարկել, թե ինչ ուսումնամեթոդական նյութեր ունի հաստատությունը ԿԶԱՊԿ ունեցող սաների համար, դրանց քանակը, ձեռք բերման տարեթիվը, ֆիզիկական վիճակը, օգտագործման հաճախականությունն ու արդյունավետությունը և այլն: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը).	«Ավազաթերապիայի լուսային սեղան» Լոտոներ,ասոցիատիվ խաղեր,զարգացնող փայտե տախտակներ, թերապևտիկ հեքիաթներ...
դ. Ուսումնական հաստատության խնամարկուի դասապրոցեսներին մասնակցելու է, որ ԿՊՏԿ ունեցող անձերը մեկուսացված չեն: *(եթե այո, ապա նկարագրել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների համար կրթության և խնամքի կազմակերպման պայմանները, դասընթացների կազմակերպվածությունը):*	ԿԶԱՊԿ ունեցող անձերը սովորական երեխաների կողքին են սովորում մեկ տարածքում, զուգահեռ ուսումնական նյութերի հավասար:
ե. Ուսումնական հաստատությունն ունի ռեսուրսային՝ ԿԶԱՊԿ ունեցող սաների հետ իրականացվող անհատական և խմբային աշխատանքների համար. *(Եթե այո, պապա նկարագրել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների համար նախատեսված ռեսուրս-սենյակի ֆիզիկական վիճակը, չափերը, հագեցվածությունը սարքավորումներով, սենյակի օգտագործման հաճախականությունը: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը):*	

12. ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ցուցանիշ	Կատարել նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին
ա. Անհատական ուսուցման և զարգացման պլանները մշակվում են՝ համաձայն նախատեսվող կրթության պետական կրթական չափորոշչի և համապատասխան կրթական ծրագրերի՝ հաշվի առնելով անձերի կարիքները, ընդունակությունները, հետաքրքրությունները, ձեռքբերումները և առաջընթացը: *ԱՈՒՊ-ները կազմվել են համատեղ՝ ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմի մասնագետներ, դաստիարակ, մեթոդիստ, բուժքույր:* *Երկու ամիսը մեկ անգամ տեղի են ունեցել ծնողների հետ համատեղ քննարկումներ ըսաների հնարավորությունների, ձեռքբերումների առաջընթացի մասին:*	ՆՈՒՀ-ում կատարվել է երկու սաների նախադպրոցական մակարդակի գնահատում՝ Նարեկ Հովհաննիսյան, Դանիել Ասլանյան. 25 08 2026 թվական: Ծնողներին ծանուցվել է ՏՄԱԿ-ի գնահատմանը մասնակցելու մասին: Երկու սաների կատարվել է վերագնահատում:
բ. մանկավարժները գիտակցում են ներառականության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում են իրազեկման և կարծրատիպերի կոտրմանն ուղղվածաշխատանքներ: *(Մանկավարժների դիրքորոշումը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ծնողների շրջանում):*	Երկու հազար քսաներկու թ. սեպտեմբեր տասներկու-ից տասնվեցը կատարվել է հարցում մանկավարժների շրջանում- «Բոլոր երեխաները իրավունք ունեն հավասար պայմաններում կրթություն ստանալու» թեմայով: Ծնողական ժողով ավագ-Ա խմբում երկու հազար քսաներեք թվականի համբարձման բաց դասի օրը թիվ տասնհինգ դպրոցի դասվարների, ուս. գծով տնօրենի ի տեղակալի դաստիարակների մասնակցությամբ անցկացվեց քննարկում սովորական և ԿԶԱՊԿ երեխաների սահուն անցումը մանկապարտեզից դպրոց թեմայով: մասնակցությամբ քսանութ ծնողների, դպրոցից չորս, մանկապարտեզից՝ չորս մանկավարժական աշխատողների:
գ. մանկավարժներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սաների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած	

տարբերություններից և առանձնահատկություններից: *(Մանկավարժների վերաբերմունքը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ծնողների շրջանում)*:	
դ. մանկավարժները կարողանում են կարծրատիպերամրապնդող վարքագիծ կամ երևույթ հայտնաբերել և ուսումնական նյութերում և հաղթահարել նույնիսկ սեփական վարքագծում: *(Ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը հայտնաբերելու և հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ծնողների շրջանում)*:	

13. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ցուցանիշ	2024-2025	2025-2026	2026-2027
ա. ուսումնական հաստատության այն սաների թիվը և տոկոսը, որոնք ունեն ԿԶԱՊԿ.	5	5	4
բ. ԿԶԱՊԿ ունեցող սաների բացակայությունների տարեկան միջին թիվը՝ օր/սան.	տասներկու օր	հիսունութ օր	Հայկ-քսաներկու Արման-չորս
գ. լրացուցիչ կրթական ծրագրերում ներառվող՝ ԿԶԱՊԿ ունեցող սաների թիվը և տոկոսը.	-	-	-

14. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՌԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ցուցանիշ	2024-2025	2025-2026	2026-2027
ա. սեռերի հարաբերակցությունը	տղա-վաթսուն աղջիկ-քառասուներեք	տղա-յոթանասունվեց աղջիկ-հիսունհինգ	տղա-ութսունչորս աղջիկ-վաթսունվեց
բ. ուսումնական հաստատությունում ընդգրկված ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը.			